Տեղեկանք գործող օրենքի
փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 13. Արտադրական նշանակության անտառները

1. Արտադրական նշանակության անտառներն են բնափայտի շարունակական արտադրությունն ապահովող անտառները, որոնք չեն դասվում հատուկ և պաշտպանական նշանակության անտառների շարքին:

2. Արտադրական նշանակության անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է անտառաշինական նախագծերի հիման վրա՝ միջանկյալ (լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային), ~~(~~խնամքի~~)~~, սանիտարական և անտառավերականգնման հատումների միջոցով, հատման տարիքի հիման վրա՝ անտառի կենսաբանական առանձնահատկությունների բարելավման նպատակով՝ ապահովելով շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունների կանխարգելումը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ բացասական ներգործությունների հետևանքների վերացումը:

3. Արտադրական նշանակության անտառներում անտառօգտագործման և պահպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 36. Բնափայտի մթերումը

1. ~~Արտադրական նշանակության պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է միջանկյալ (խնամքի) և սանիտարական հատումների, իսկ հասուն և գերհասուն ծառուտներում՝ անտառավերականգնման հատումների արդյունքում:~~ «Արտադրական նշանակության պետական և համայնքային անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է միջանկյալ (լուսավորության, մաքրման, նոսրացման, անցումային), խնամքի և սանիտարական հատումների արդյունքում:»

2. Պաշտպանական և հատուկ նշանակության ~~,~~ **պետական և համայնքային** անտառներում բնափայտի մթերումն իրականացվում է անտառավերականգնման կամավոր ընտրողական, ~~միջանկյալ (~~ խնամքի ~~)~~ և սանիտարական հատումների արդյունքում, բացառությամբ պետական արգելոցների:

2^1 պաշտպանական և հատուկ նշանակության անտառներում բնափայտի մթերման նպատակով հատումներն իրականացվում են անտառավերականգնման կամավոր ընտրողական հատումների եղանակով՝ անտառի շահերից ելնելով հատման են նշանակվում հասուն, գերհասուն, վնասված, հիվանդություններով ու վնասատուներից վարակված, բնական վերաճին խանգարող ծառերը:

3. Բնափայտի մթերումն իրականացվում և տարեկան հաշվարկային հատատեղերը որոշվում են անտառաշինական նախագծերի հիման վրա: Անտառաշինական նախագծերի բացակայության կամ ժամկետանց ճանաչվելու դեպքում բնափայտի մթերումն իրականացվում է պետական կառավարման լիազորված մարմնի ստեղծած մասնագիտական հանձնաժողովների փաստացի ուսումնասիրությունների և եզրակացությունների հիման վրա:

4. Բնափայտի մթերման կարգը պետական և համայնքային անտառներում հաստատում է պետական կառավարման լիազորված մարմինը: